



ԳԼՈԲՈՒՄ



*Հրատարակում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ*

1 (90)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈՒԲՈՒՍ

Թիվ 1 (90), 2018

«ԳԼՈՒԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների
ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան

ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և
Ռուս-հայկական (սլավոնական)
համալսարանի կառավարման ամբիոնների
դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ. Կարապետյան

ՀՀ վարչապետ, տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան

ՀՀ Կ փոխնախագահ

Սամվել Մանուկյան

«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ազյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական,
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի Հանրային կառավարման
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
նախագահ, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր

Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի

տեղակալ

Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր

Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու

քարտուղար

Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ

Արեստակես Միմալոբյան

Դիանա Գալստյան

Կարեն Վերանյան

Սամվել Մանուկյան

Վահագն Ազյան

Վահրամ Հովյան

Էջադրող-ձևավորող

Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈՒԲՈՒՄ

Թիվ 1 (90), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արա Մարջանյան

Ադրբեջանի տիեզերական տեխնոլոգիական սեգմենտը 5

Դիանա Գալստյան

Տեղեկատվական դաշտի վերահսկողության մեխանիզմներն Ադրբեջանում 16

Արեստակես Միմավորյան

Դիտարկումներ ադրբեջանական սփյուռքի մեդիա-ռեսուրսների վերաբերյալ 23

Վահրամ Հովյան

Իրանի քաղաքականությունը գիտական սփյուռքի հանդեպ 28

Գագիկ Հարությունյան

Եվրասիական ինտեգրացիայի կրիտիկական ենթակառուցվածքները 35

Հուշագիր հեղինակին 39


ԱՌՐԲԵՋԱՆԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԳՄԵՆՏԸ¹

*Արա Հ. Մարջանյան**

Մույն հոդվածը շարունակում է մեր նախորդ հրապարակումների շարքը՝ նվիրված Հայաստանում և Ադրբեջանում կապի և ինֆորմացիոն (տեղեկատվական) տեխնոլոգիաների (ԻԿՏ, *ICT*) ոլորտի ցուցանիշների ներկայացմանը և վերլուծությանը, «Նորավանք» ԳԿՀ «Հայաստան - Ադրբեջան. կրիտիկական ենթակառուցվածքներ» թեմայի մոտեցումներին համահունչ:

Նկար 1

Ադրբեջանի հեռահաղորդակցային «Azerspace-1» (ձախից) և հետախուզա-հեռագնման «Azersky» (աջից) արբանյակները



1. Կազմակերպչական բաղադրիչ

Ադրբեջանական Հանրապետությունում տիեզերական տեխնոլոգիաների զարգացման մեկնարկը թվագրվում է 1992-ով, երբ նախագահի հրամանագրով Կոսմոսիկական սարքաշինության գիտաարտադրական միավորման (ԿՍ ԳԱՍ, *ՀՊՕ ԿՊ*) հենքի վրա կազմավորվեց Ադրբեջանի Ազգային աերոկոսմոսիկական գործակալությունը (ԱԱԱԳ, *ԱՀԱԿԱ*): Կազմավորման այս փուլին մեծապես նպաստեց այն հանգամանքը, որ Ադր. ԽՍՀ ԳԱ կազ-

¹ Հոդվածի ծավալուն տարբերակը կտպագրվի «21-րդ ԴԱԸ» ամսագրի առաջիկա համարում:
* «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա., ՄԱԿ ԶԾ ազգային փորձագետ (էներգետիկա):

մում դեռ 1974թ. գործում էր Տիեզերքից երկրային բնական պաշարների ուսումնասիրման կենտրոնն² իր ստորաբաժանումներով, որը նույնպես մտավ ԱԱԱԳ կազմի մեջ: 2008թ. նոյեմբերի 4-ին Ի.Ալիևը ստորագրեց «Ադրբեջանում կոսմիկական արդյունաբերության ստեղծման և հեռահաղորդակցային արբանյակների արձակման մասին» թիվ 27 հրամանագիրը³, 2009թ. օգոստոսի 17-ին՝ Ադրբեջանում Կոսմիկական տեխնոլոգիայի ստեղծման պետական ծրագիրը և Կոսմիկական հարցերով խորհրդի կազմը Կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարությունում⁴: 2010թ. հիմնադրվեց «Azerkosmos» բաց բաժնետիրական ընկերությունը, որի առաջնահերթ խնդիրներից էին. «ուղեծիր դուրս բերել հեռահաղորդակցային արբանյակ, ապահովել նրա ղեկավարումը և շահագործումը»: 2017թ. հոկտեմբերի 17-ին Ի.Ալիևի հրամանագրով «Azerkosmos» բաց բաժնետիրական ընկերությունը դուրս բերվեց տրանսպորտի, կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարության (ԱՀ ՏԿԲՏՆ) ենթակայությունից և դրվեց ընդհանուր ազգային ենթակայության տակ⁵:

Դատելով բաց աղբյուրներում առկա տեղեկատվությունից՝ կարելի է ենթադրել, որ ներկայում Ադրբեջանի կոսմիկական տեխնոլոգիաների հատվածը բաղկացած է հիմնականում երկու բաղադրիչից: Առաջինը ներառում է կապի և հեռահաղորդակցության ոլորտները, բացի այդ՝ սպասարկում է նաև Ադրբեջանի ինֆորմացիոն և քարոզչական քաղաքականության ու տարածաշրջանային քաղաքական համագործակցության խնդիրները: Նյութատեխնիկական առումով այն ներկայում հիմնվում է «Azerspace-1» արբանյակի և հարակից ենթակառուցվածքի վրա: Երկրորդն ունի երկակի նշանակություն և ներառում է հետախուզական և հեռազննման ոլորտները: Նյութատեխնիկական առումով այն ներկայում հիմնվում է «Azersky» արբանյակի և հարակից ենթակառուցվածքի վրա:

Երկու բաղադրիչներում էլ ներկայում նշանակալի դերակատարում ունի Ֆրանսիայի հետ ռազմավարական համագործակցությունը: Իսկ

² «Юго-восточный центр по исследованию природных ресурсов с использованием космических технических средств» (Центр «Каспий»).

³ ru.president.az/articles/7257

⁴ www.mincom.gov.az/nazirlik-ru-RU/page-420/page-553/

⁵ https://haqqin.az/news/113472

առաջին բաղադրիչով սկզբնական փուլում նշանակալի էր ԱՄՆ «*Orbital Sciences*» տիեզերական կորպորացիայի դերակատարումը: Ադրբեջանի կոսմոսական խմբավորումը ներկայում բաղկացած է երկու արբանյակներից. գեոստացիոնար ուղեծրում՝ հեռահաղորդակցային, և արևասինքրոն ուղեծրում՝ հետախուզա-հեռազննական: Դատելով Ադրբեջանում 2018-2021թթ. ժամանակահատվածի համար ԻԿՏ ոլորտի զարգացման ռազմավարական փաստաթղթից՝ կարելի է եզրակացնել, որ միջնաժամկետ հեռանկարում պլանավորվում է երկրի արբանյակային խմբավորումը հասցնել չորսի՝ 2-ական արբանյակ գեոստացիոնար և արևասինքրոն ուղեծրերում⁶:

2. Կապի և հեռահաղորդակցության բաղադրիչ («Azerspace-1» արբանյակ)

Ադրբեջանի առաջին հեռահաղորդակցային արբանյակը՝ «*Azerspace-1*»-ը⁷, արձակվել է 2013թ. փետրվարի 7-ին, պլանավորված ժամկետից (2012թ. հուլիս-օգոստոս) մոտ մեկ տարի ուշացումով⁸: Արձակումն իրականացվեց ֆրանսիական «Կոլոու» կոսմոդրոմից, «*Arianespace*» ընկերության «*Ariane-5 ECA*» ծանր դասի հրթիռային կրիչով: Արբանյակը նախատեսված էր «թվային հեռարձակման, ինտերնետ հասանելիության, տվյալների փոխանակման, *VSAT* համակարգերի սպասարկման, ինչպես նաև պետական և հատուկ կապի» ոլորտներում ծառայություններ մատուցելու համար: 3275 կգ ընդհանուր զանգվածով «*Azerspace-1*» արբանյակը պատրաստվել էր ԱՄՆ «*Orbital Sciences*» տիեզերական կորպորացիայի կողմից⁹, *STAR-2* ունիֆիկացված պլատֆորմի հիման վրա: Արբանյակի շահագործման ակնկալվող ժամկետը 15 տարի է: «*Azerspace-1*» ծրագրի ընդհանուր արժեքը 2013թ. գնահատականներով կազմել է \$230 մլն¹⁰ (այլ տվյալներով՝ \$202.6 մլն), ներառյալ արբանյակի ղեկավարման հիմնական և պահեստային կենտրոնների կառուցումը (տես՝ ստորև): Այս կենտրոնների «*Azerspace-1*» արբանյակը սպասարկող հեռաչափական և անտենային սար-

⁶ Տե՛ս նաև՝ <https://www.trend.az/business/it/2812163.htm>

⁷ Արբանյակի սկզբնական մակնիշավորումը՝ Azerspace/Africasat-1a.

⁸ <http://www.satellitetoday.com/telecom/2010/05/28/orbital-contracted-to-build-azerbaijans-first-satellite/>

⁹ Պայմանագիրը ստորագրվել էր 2010թ. մայիսի 27-ին:

¹⁰ <http://satelliteprome.com/news/azerspace-1-satellite-launch-date-announced/>

քավորումների պատրաստումն ու տեղակայումը «*Orbital Sciences*» կորպորացիան հանձնեց իսպանական «*GMV*» կապալառու ընկերությանը¹¹:

«*Azerspace-1*» արբանյակը¹² դուրս է բերվել գեոստացիոնար ուղեծիր¹³ և ներկայում դիրքավորված է մալայզիական «*Measat Satellite Systems*» ընկերությանը պատկանող և «*Azerkosmos*»-ի կողմից 20 տարով վարձակալված, 46° արևելյան երկայնությամբ կոորդիանատային դիրքում: Արբանյակի հեռահաղորդակցային կարողությունների 20%-ը վերապահված է Ադրբեջանին, իսկ մնացած 80%-ը նախատեսվում է օգտագործել կոմերցիոն նպատակներով: 2017թ. մարտի դրությամբ արբանյակի միջոցով իրականացվում էր 30 հեռուստա- և 17 ռադիոալիքների հեռարձակումը՝ ադրբեջաներեն, թուրքերեն, վրացերեն, ուկրաիներեն և ռուսերեն լեզուներով: 2017-ին «*Azerkosmos*» և վրացական «*The Georgian Public Broadcasting*» ընկերության միջև համաձայնագիր կնքվեց *Adjara TV, 2TV, Maestro TV, Saperavi TV, Palitra TV* և *Trialeti TV* հեռուստաալիքների կոմերցիոն հեռարձակման մասին:

Ադրբեջանական 2-րդ՝ «*Azerspace-2*» հեռահաղորդակցական արբանյակի արձակումը նախատեսվում էր 2015-ին, այնուհետև՝ 2016-ին, և հետո՝ 2017թ.: Այսպես, 2015թ. սեպտեմբերին ԱՄՆ *ExIm* բանկը հրաժարվեց ֆինանսավորել «*Orbital Sciences*» ընկերությանը «*Azerspace-2*» արբանյակի պատրաստման համար, քանի որ ԱՄՆ կոնգրեսը ազելափակել էր *ExIm* բանկի կողմից խոշոր արտոնյալ վարկերի տրամադրումը: 2015թ. հոկտեմբերին Ադրբեջանն այս ծրագրի իրագործմանը հրավիրել էր կանադա-եվրոպական «*Space Systems/Loral*» ընկերությանը: Նույն տարվա դեկտեմբերին «*Azerkosmos*»-ի և ֆրանսիական «*Arianespace*» ընկերության միջև պայմանագիր կնքվեց «Կուռու» կոսմոդրոմից «*Azerspace-2/Intelsat-38*» արբանյակի արձակման համար: Համաձայն ադրբեջանական աղբյուրների՝ այս արբանյակի արձակումը նախատեսված է 2018թ. առաջին եռամսյակում¹⁴:

¹¹ <http://www.satellitetoday.com/telecom/2010/12/22/gmv-deal-completes-azerbaijan-satellite-contract-partnership-network/>

¹² Արբանյակի միջազգային մակնիշավորումը՝ 2013-00B, NORAD նույնականացման մակնիշը՝ 39079:

¹³ Պերիգելը՝ 35.7 հազ. կմ, ապոգելը՝ 35.8 հազ. կմ, թեքումը՝ 0.0°, պտույտի պարբերությունը՝ 1436.1 րոպե (մեկ սիդերիկ օր), ինչի հետևանքով այն մնում է անշարժ երկրի մակերևույթի հանդեպ՝ «կախված» 46° ա.ե. կետում:

¹⁴ <http://minval.az/news/123732936>

3. Հետախուզա-հեռազննման բաղադրիչ («Azersky» արբանյակ)

Ադրբեջանի կոսմոսական հետախուզական և հեռազննման բաղադրիչը ներառում է ինչպես զուտ քաղաքացիական նշանակության հատված (անտառային, ջրային ծածկերի, վարելահողերի հեռազննում, բնապահպանական մոնիթորինգ և այլն), այնպես էլ զուտ ռազմական (հետախուզական լուսանկարում, զորամիավորումների տեղաշարժի, ենթակառուցվածքային զարգացումների հետախուզում և այլն), և երկակի նշանակության (տեղագրական հանույթ, տոպոգրաֆիական քարտեզագրում, եռաչափ թվային մոդելների պատրաստում, GIS⁵ համակարգերի ստեղծում և այլն) հատվածներ:

Սույն բաղադրիչով աշխատանքների սկիզբը ֆորմալ առումով կարելի է թվագրել 2006-ով, երբ Ի.Ալիևի հրամանագրով ԱՍԱԳ-ն՝ իր կազմում գտնվող Աերոկոսմոսական ինֆորմատիկայի գիտահետազոտական ինստիտուտի հետ փոխանցվեց Ադրբեջանի պաշտպանական արդյունաբերության նախարարության ենթակայության ներքո¹⁶: Տարվող աշխատանքների կարևորագույն հենքը Ադրբեջանի և ֆրանսիական «Airbus Defense and Space» ընկերության միջև ռազմավարական համագործակցությունն է, ինչպես նաև Թուրքիայի¹⁷ և, հավանաբար, Իսրայելի հետ համագործակցությունը: Փաստված է նաև Բելառուսի հետ համագործակցության մասին էպիզոդիկ մտադրությունը¹⁸ և ՌԴ-ի հետ համագործակցությունը՝ հիմնականում քաղաքացիական ոլորտում¹⁹:

2014թ. դեկտեմբերի սկզբին մասնագիտական կայքերում և հրապարակումներում հայտնվեցին ֆրանսիական նորաստեղծ «Spot-7» արբանյակի՝ Ադրբեջանին հանձնման/վաճառքի մասին հաղորդագրություններ²⁰: Տեղի ունեցածը գնահատվում էր որպես «արդեն ուղեծրում գտնվող

¹⁵ Geographical information systems, աշխարհագրական ինֆորմացիոն համակարգեր (ԱԻՀ):

¹⁶ Նախարարությունը ստեղծվել է 2005թ. դեկտեմբերի 16-ին, Ազերի-Չիրազ-Գյունեշլի նավթահաշտի «հիմնական նավթի» փուլի մեկնարկի նախօրյակին և որպես Ադրբեջանի ռազմականացման պետական համալիր ծրագրի բաղկացուցիչ մաս: Մանրամասն տես՝ [1], Հ. 1, Գլ. 2 և 5:

¹⁷ <http://minval.az/news/123627580>, <https://haqqin.az/news/40705> և այլն:

¹⁸ http://ont.by/news/our_news/0078878

¹⁹ <http://www.scanex.ru/company/news/gyuneshli-6/>, <https://haqqin.az/news/72108>, <https://elibrary.ru/item.asp?id=17680117>, https://azertag.az/ru/xeber/Prezident_Ilham_Aliev_prinyal_konsultanta_Kosmicheskoi_programmy_Azerbaidzhana_akademika_Roalda_Sagdeeva-251463, և այլն:

²⁰ <http://spacenews.com/42840airbus-sells-in-orbit-spot-7-imaging-satellite-to-azerbaijan/> և այլն:

արբանյակի անսովոր պայմանագրով անակնկալ վաճառք՝ չբացահայտված գումարով»:

720 կգ զանգվածով «Spot-7»-ը, որը վերանվանվեց «Azersky», Երկրագնդի մակերևույթի հետախուզա-հեռագննական լուծման միջին դասի արբանյակ է: Այն մշակվել է ֆրանսիական Թուլուզ քաղաքում տեղակայված «Spot Image»/«EADS Astrium» ընկերության կողմից (ներկայումս՝ «Airbus Defense and Space»-ի մաս), սկսած 2008-ից: «Spot-7» արբանյակը, 2012թ. սեպտեմբերին թողարկված «Spot-6»-ի հետ համատեղ, կոչված է փոխարինելու Spot-4 և 5 արբանյակային զույգին՝ «EADS Astrium» ընկերության նոր (2009թ.) ռազմավարությանը համահունչ: «EADS Astrium»/«Airbus Defense and Space» ընկերությունների ծախսերը Spot-6 և 7 արբանյակային զույգի ստեղծման համար կազմել են \$375 մլն²¹:

«Spot-7»-ի արձակումն իրականացվել է 2014թ. հունիսի 30-ին, Հնդկաստանի Շրիհարիկոտա կոսմոդրոմից²², հնդկական PSLV-C23²³ միջին դասի հրթիռային կրիչով, չորս այլ արբանյակների հետ: Այն դուրս էր բերվել արևասինքրոն, գրեթե շրջանաձև ուղեծիր²⁴: Արբանյակի միջազգային մակնիշավորումը՝ 2014-034A, NORAD նույնականացման մակնիշը՝ 40053²⁵: Արբանյակից ստացված տվյալների օգտագործման հիմնական ուղղություններն են.

- Ենթակառուցվածքային տարաբնույթ օբյեկտների (ռազմական, էներգետիկ, նավթագազային, արդյունաբերական, տրանսպորտային և այլն) շինարարության և վերազինման, մեծածավալ փոխարումների և այլ ակտիվության դիտարկում:
- Մինչև 1:25 000 մասշտաբի հանույթ, տուպոգրաֆիկ և հատուկ քարտեզագրում:

²¹ <http://spacenews.com/42840airbus-sells-in-orbit-spot-7-imaging-satellite-to-azerbaijan/> / Ի տարբերություն նախորդ արբանյակների, Spot 6 և 7 արբանյակների ստեղծումը Ֆրանսիայի կառավարությունը չի ֆինանսավորել:

²² Հնդկաստանի Սատիշ Դհավանիի անվան ազգային կոսմոդրոմ (Satish Dhawan Space Centre):

²³ Polar Satellite Launch Vehicle, PSLV.

²⁴ պերիգեյ՝ 704 կմ, ապոգեյ՝ 706 կմ, թեքումը՝ 98.2°, պտույտը՝ 98.7 րոպե, ամեն պտույտին հասարակածը այն հատում է միննույն տեղական ժամանակով՝ ժամը 10:00-ին:

²⁵ Արբանյակի ուղեծրին առցանց կարելի է հետևել NORAD կայքում՝ <http://www.n2yo.com/?s=40053>

- Տարաբնույթ ԱԻՀ հենքային շերտերի համար ռելիեֆի թվային մոդելների ստեղծում, ըստ բարձրության 5–10 մ ճշգրտությամբ:
- Բնական երևույթների, մարդածին և բնական աղետների, բնապահպանական, գյուղատնտեսական (բերքատվության գնահատում, մոլախոտացման, վնասատուների տարածում և այլն), բնակլիմայական (անապատացում, ճահճացում, աղակալում, կարստ, էրոզիա), քաղաքաշինական և այլ բնույթի ինվենտարիզացիա ու մշտադիտարկում:

Արբանյակի դիտողական հենքը կազմում է 200 մմ ապերտուրով, սիլիցիում/կարբիդե հենքով, Կորշի հեռադիտակը²⁶, համակցված «EADS Astrium» ընկերության երկու NAOMI²⁷ գործիքների հետ, որոնք թույլատրում են լուսանկարումն իրականացնել պանխրոմատիկ ($PN, 0.45-0.75\mu m$) և բազմասպեկտրալ (MS , կապույտ, կանաչ, կարմիր, և մերձավոր ԻԿ տիրույթներ) ռեժիմներում: Լուծումը նադիրում՝ 1.5-ից 2.0 մ (PN ռեժիմ) և 6.0-ից 10.0 մ (MS ռեժիմ):

«Spot-7»-ի գործիքակազմի շարժունակությունը²⁸ թույլ է տալիս պատվիրատուի ընտրությամբ լուսանկարումներն իրականացնել տարածական տարբեր ռեժիմներում. ա) արբանյակի ուղեծրի հետագծի երկայնքով ընտրովի հարթակներ (սովորաբար՝ 60x60 կմ մինչև 11 տարբեր հարթակ՝ 1.0 հազ. կմ երկարությամբ ուղեծրային հատվածում, Նկ. 2, ձախից), բ) երկար շերտերի ռեժիմ (հիմնական ռեժիմ՝ Spot 6 և 7-ի համար, 60 կմ լայնությամբ և 600 կմ մաքս. երկարությամբ, Նկ. 2, կենտրոնում); գ) մակերևութային, սովորաբար՝ 330x300 կմ մակերեսով (Նկ. 2, աջ կողմում): Արբանյակի շահագործման ժամկետը՝ 10 (այլ սվյալներով՝ 9) տարի:


²⁶ Korsch telescope in Silicon Carbide (SiC).

²⁷ New AstroSat Optical Modular Instrument.

²⁸ agility, 12 վայրկյանում 30°:


Նկար 2

Տարբեր ռեժիմներում «Azersky» արբանյակի լուսանկարման տարածական հարթակները (գոտիները)՝ ըստ ուղեծրի հետագծի (ընդհատ թեք գիծ)



Աղբյուրը՝ <https://directory.eoportal.org/web/eoportal/satellite-missions/s/spot-6-7>

Ադրբեջանա-ֆրանսիական կոսմիկական համագործակցության առանձնահատկությունն այն է, որ ըստ «EADS Astrium»/«Airbus Defense and Space» «համաստեղային» ռազմավարության, Spot 6 և 7 արբանյակային զույգը²⁹ պետք է մինչև 2023թ. շահագործվի «Airbus Defense and Space» ընկերության մեկ այլ՝ «Pleiades 1a և 1b» զույգի հետ համատեղ: Այս 4 արբանյակներն ուղեծ-



րում դիրքավորված են այնպես, որ միմյանց նկատմամբ ունենան 90° ֆազային համաձայնեցված շեղում (տե՛ս լուսամուտում), ինչը թույլ է տալիս կոմբերցիոն և պետական պատվիրատուներին ստանալ երկրի մակերևույթի միևնույն հատվածի լուսանկարները՝ օրական 2 անգամ: Ինչպես բարձր լուծումով լուսանկարումների ավելի ընդգրկուն շերտում (Spot արբանյակներ), այնպես

էլ գերանրամասն լուծումով ավելի դետալացված լուսանկարներ (Pleiades արբանյակներ, նկարների լուծումը՝ 0.5-0.7 մ)³⁰:

²⁹ Դրանց միջև ֆազային համաձայնեցված շեղումը կազմում է 180°: Արբանյակային այս զույգի Երկրի մակերևույթի տվյալ կետի դիտման վերադարձի ժամանակը՝ օրական: Միայն մեկ արբանյակից օգտվելու դեպքում՝ 2 օրը մեկ:

³⁰ <http://mapgroup.com.ua/kosmicheskie-apparaty/84-kosmicheskie-apparaty-sputniki-frantsii/569-spot-6-7>

Դատելով բաց աղբյուրների տեղեկատվությունից՝ 2014թ. դեկտեմբերյան ադրբեջանա-ֆրանսիական պայմանագիրը նախատեսում էր Ադրբեջանին *Spot-7* արբանյակի վաճառքը, և Ադրբեջանի ու ԱՊՀ տարածքում լուսանկարման առաջնահերթ իրավունքի փոխանցումը³¹: Արդյո՞ք այն ներառում/նախատեսում էր նաև հասանելիություն *Spot/Pleiades* քառարբանյակ համաստեղությունից գոյացած ինֆորմացիոն հոսքին՝ բաց աղբյուրներից մնում է անհասկանալի. այստեղ առկա են իրարամերժ պնդումներ: Բոլոր դեպքերում, Ադրբեջանի համար *Spot-6* և *7* արբանյակային զույգի համատեղ հնարավորությունների օգտագործումը հասանելի դարձավ ոչ ուշ, քան 2016թ. ապրիլը, ամենայն հավանականությամբ՝ 2015թ. 2-րդ կեսից: Բաց աղբյուրներում նշվում է նաև *Spot-6* և *7* արբանյակային զույգից Թուրքիայի օգտվելու փաստը³²:

Նկար 3

Արբանյակային ղեկավարման պահեստային կենտրոնը Նախիջևանում



4. Վերերկրյա ենթակառուցվածք

Համաձայն 2010թ. «*Orbital Sciences*» տիեզերական կորպորացիայի և «*Azerkosmos*» ԲԲԸ-ի միջև կնքված համաձայնագրի, նախատեսվում էր, որ Ադրբեջանում կկառուցվի արբանյակների ղեկավարման և շահագործման վե-

³¹ Բայց ոչ բացառիկ: Այլ տարածքներում «Airbus Defense and Space» ընկերությունը պահպանում է լուսանկարների իրականացման և վաճառքի իր կոմերցիոն առաջնահերթ իրավունքը: Այս տարածքների հաճախորդների համար արբանյակը պահպանում է *Spot-7* անվանումը:

³² <http://www.intelligence-airbusds.com/en/4582-spot-6-7-turkey-steps-up-collaboration-with-astrium-services>

րերկրյա երկու՝ հիմնական և պահեստային կենտրոն: Արբանյակների ղեկավարման և շահագործման հիմնական կենտրոնը շահագործման հանձնվեց 2013թ. ապրիլին: Այն գտնվում է Բաքվից 25.7 կմ արևմուտք-հյուսիս-արևմուտք, Գոբուստան ավանից և M4 մայրուղուց 3.25 կմ հարավ:

Նախիջևանում Արբանյակային ղեկավարման պահեստային կենտրոնի (ԱՂՊԿ) ստեղծման մասին հաղորդագրությունները տարածվեցին 2014թ. փետրվարին, թեև երկրորդ՝ պահեստային կենտրոնի ստեղծման մասին նշվում էր դեռ 2010թ. պայմանագրում: Հաղորդագրություններում նշվում էր, որ Բաքվում տեղակայված հիմնական ԱՂԿ խափանման դեպքում արբանյակների ղեկավարումն ավտոմատ կերպով կանցնի նախիջևանյան ԱՂՊԿ-ին: Նշվում էր նաև, որ Նախիջևանում ԱՂՊԿ ստեղծումը «կնպաստի ինքնավար հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովմանը, գիտության վրա հենվող նոր ծրագրերի իրագործմանը, հեռահաղորդակցության և կապի ոլորտում որակյալ ծառայությունների մատուցմանը, ինչպես նաև էլեկտրոնային կառավարության ձևավորմանը»: Համաձայն 2016թ. ապրիլին *ViaSatellite* կայքին «*Azerkosmos*» ԲԲԸ այն ժամանակվա գործադիր ղեկավար Ռաշադ Նաբիևի (*Rashad Nabiyeu*) տված հարցազրույցի, ԱՂՊԿ-ն և «*Azerspace-1*» արբանյակը «երաշխավորում են Ադրբեջանի և Նախիջևանի միջև ուղղակի կապը, անկախ այլ երկրների տարածքով անցնող որևէ կապուղիներից»³³:

2017թ. հուլիսին՝ հիմնադրման լուրից 3 տարի անց, հայտարարվեց, որ ԱՂՊԿ անտենային դաշտի կառուցման, դրա հարթակի նախապատրաստման և հարակից այլ աշխատանքների կատարման համար «*Azerkosmos*»-ն ընտրել է «*Gemi Gaya*» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը³⁴:

³³ <http://www.satellitetoday.com/regional/2016/04/29/azerkosmos-continues-to-ramp-up-satellite-capabilities/>

³⁴ <http://interfax.az/view/708582>. Արբանյակային անտենային վերերկրյա ենթակառուցվածքների համաշխարհային տեղեկատվություն և տվյալների գրադարաններում նշված անունով ընկերություն չկա: Առկա է միայն Gaia մակնիշով ցածրաուղեծրային արբանյակների կենտրոնների համար նախատեսված անտենաների ընտանիքը (Gaia 200/300/400՝ 3.7 մ-ից մինչև 11.0 մ տրամաչափով): Այն արտադրվում է Բսրայելի ռազմարդյունաբերական համալիրի առաջատարներից մեկի՝ ORBIT Communication Systems, Ltd. սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից (<http://orbit-cs.com/>): Ըստ ԱՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնյայի, աշխատանքների պայմանագրային գումարը մոտ 335 հազ. մանաթ (մոտ \$198 հազ. ըստ 2017թ. հուլիսի դրությամբ՝ պաշտոնական փոխարժեքի):

Գրականություն

1. *Մարջանյան, Ա. Հ.*, Արրբեջանական Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2013.-330 էջ,
http://www.noravank.am/arm/books/details.php?ELEMENT_ID=12315
http://www.noravank.am/upload/pdf/Marjanyan_book.pdf
Հավելվածներ՝ <http://www.noravank.am/upload/pdf/ANNEXES.pdf>.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ԱԴՐԲԵԶԱՆՈՒՄ

Դիանա Գալստյան՝

Ցանկացած երկրի տեղեկատվական քաղաքականությունը ձևավորվում է միջազգային որոշակի չափանիշների և սեփական երկրի առանձնահատկությունների համաձայն: Ինֆորքաղաքականության իրագործումը բազմաշերտ խնդիր է, որը պարունակում է նորմատիվային-իրավական, տեխնիկական-տնտեսական և սոցիալական (այդ թվում՝ կրթական) բաղադրիչներ¹: Ադրբեջանի ներքին տեղեկատվական քաղաքականության իրականացման հիմնական նպատակն է սեփական տեղեկատվական տարածքի պաշտպանությունն արտաքին տեղեկատվական հոսքերից, ինչպես նաև վերահսկողությունը: Սույն հոդվածում կանդրադառնանք Ադրբեջանի տեղեկատվական դաշտը կարգավորող օրենքներին և վերահսկման որոշ մեխանիզմներին:

ԶԼՄ ոլորտը կարգավորող օրենքներ վերահսկման իրավասություն ունեցող մարմիններ

Տեղեկատվական քաղաքականությունը դիտարկվում է որպես քաղաքական ազդեցության՝ քաղաքական նպատակների հասնելու միջոց: Այս տեսանկյունից չափազանց կարևոր են այդ քաղաքականության հիմնական ուղղությունների հստակեցումը, տեղեկատվական քաղաքականության օբյեկտ հանդիսացող զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող մարմինների ստեղծումը և օրենքների ընդունումը: Տեղեկատվական անվտանգության ոլորտը կարգավորող նորմերը և սկզբունքներն ամրագրված են ինչպես Ադրբեջանի Ազգային անվտանգության հայեցակարգում, այնպես էլ առանձին օրենքներով, ինչպես, օրինակ, 1998թ. ընդունված «Տեղեկատվության, տեղեկատվայնացման, տեղեկատվության պաշտպանու-

¹ «Նորվանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

¹ Нисевич Ю.А., «Государственная информационная политика»,
https://lap.hse.ru/data/2012/12/05/1301814905/inf_vlast.pdf

թյան» մասին օրենքը, 1999թ. ընդունված «ԶԼՄ-ի մասին օրենքը», 2002թ. ընդունված «Ռադիոյի և հեռուստատեսության մասին օրենքը», 2004թ. ընդունված «Պետական գաղտնիքի մասին օրենքը» և այլն: Այս օրենքներում պարբերաբար փոփոխություններ և լրացումներ են կատարվում, վերջին տարիներին արձանագրվում են այդ օրենքների խստացումներ:

2000թ. նախագահի հրամանով լուծարվեց *Մամուլի և տեղեկատվության նախարարությունը*, ինչը մեկնաբանվեց որպես «ԶԼՄ-ի նկատմամբ պետության կողմից վերահսկողության վերացմանն ուղղված քայլ»: 2003թ. Ադրբեջանի լրագրողների առաջին համագումարից հետո հիմնադրվեց «Մամուլի խորհուրդը», որն ուներ հասարակական կազմակերպության կարգավիճակ և պետք է դառնար ԶԼՄ ինքնակարգավորող մարմին: Նույն տարի ԶԼՄ ոլորտը համակարգելու և պետական քաղաքականության իրականացման նպատակով ստեղծվեց *Հեռուստատեսության և ռադիոյի ազգային խորհուրդը*: Հետագայում՝ 2008թ., հաստատվեց *Ադրբեջանի Հանրապետությունում ԶԼՄ զարգացման աջակցման պետական հայեցակարգը*, որի շրջանակներում էլ 2009թ. Ադրբեջանի նախագահին կից ստեղծվեց «ԶԼՄ զարգացման աջակցության պետական հիմնադրամը»: Ազգային տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության սպառնալիքների կանխարգելման նպատակով 2012թ. Ադրբեջանի նախագահի հրամանով *Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը* կից ստեղծվեց *Էլեկտրոնային անվտանգության կենտրոնը*: Այս մարմինների միջոցով էլ հիմնականում կարգավորվում է ԶԼՄ ոլորտի գործունեությունը:

Ադրբեջանի սահմանադրությամբ ամրագրված են խոսքի, մտքի և տեղեկատվության ազատության կանոնադրությունները, ինչպես նաև տեղեկատվություն ստանալու և տարածելու մասին քաղաքացու իրավունքը, անկախ լրատվամիջոցների ստեղծման իրավունքը: Այսինքն, ինչպես նշում են պաշտոնական և դրանց մոտ կանգնած աղբյուրները, «Ադրբեջանում ստեղծվեցին բոլոր պայմանները լրատվամիջոցների անարգել գործունեության, զարգացման համար: Լրատվամիջոցները վայելում են պետական աջակցություն, պետությունը խրախուսում է անկախ լրատվամիջոցների գործունեությունը»: Սա հռչակված պաշտոնական

տեսակետն է, սակայն գործնականում իրավիճակը հետևյալն է. ադրբեջանական իշխանությունները վարում են կոշտ տեղեկատվական քաղաքականություն ներքին դաշտում: Ինչպես նշում են միջազգային տարբեր կազմակերպություններ (*Freedom House իրավապաշտպան միջազգային կազմակերպություն*, Միջազգային հետազոտությունների և փոխանակման *խորհուրդ - IREX*, լրագրողների պաշտպանության եվրոպական կոմիտե - *CPJ Europe*) տարբեր տարիների իրենց զեկույցներում², զանգվածային լրատվամիջոցները գտնվում են ադրբեջանական իշխանությունների վերահսկողության տակ: Բոլոր կառույցները, ընդունված օրենքները, որոնք ստեղծվել էին և պետք է նպաստեին ոլորտի բարելավմանը, աջակցեին ՋԼՄ անարգել գործունեությանը, գործնականում վերածվեցին դրանց աշխատանքները սահմանափակող օրենքների, դրանք վերահսկող մարմինների: Այսպես, օրինակ, «Մամուլի խորհուրդ»-ն իր վրա վերցրեց «ռեկետային լրագրության» դեմ պայքարելու գործառույթը: Այն ստեղծեց Ադրբեջանի համար անցանկալի լրատվամիջոցների, լրագրողների ցանկ, որը պարբերաբար թարմացվում է, այդ ցանկում ընդգրկված են 80-ից ավելի լրատվամիջոցներ³: Վերջերս «Մամուլի խորհրդի» նախագահ, պատգամավոր Աֆլաթուն Ամաշովը ներկայացրեց խորհրդին իրավական կարգավիճակ շնորհելու և լիազորությունների ընդլայնման առաջարկը՝ այն պատճառաբանությամբ, որ «*խորհուրդը, հանդիսանալով հասարակական կազմակերպություն, հաճախ չի կարողանում անհրաժեշտ միջոցների դիմել*»⁴:

Վերահսկողության, գրաքննության տեսակները և դրսևորումներն Ադրբեջանում. Չնայած Ադրբեջանում 1998թ. չեղարկվեց գրախոսության մասին օրենքը, սակայն դա բոլորովին չէր նշանակում գրախոսության վերացում, դրանով այլ գործընթացի սկիզբ դրվեց: Գրաքննությունը և ՋԼՄ գործունեության սահմանափակումներն արտացոլվեցին ոլորտը կարգավորող այլ օրենքների դրույթներում: Մասնավորապես, 2015թ.

² <https://www.panorama.am/ru/news/2016/04/29/IREX-%D0%A1%D0%9C%D0%98-%D0%90%D0%B7%D0%B5%D1%80%D0%B1%D0%B0%D0%B9%D0%B4%D0%B6%D0%B0%D0%BD/157>, www.bbc.com/russian/news-41062493, <https://freedomhouse.org/report/freedom-net/freedom-net-2017>

³ <http://www.presscouncil.az/az/show.page.php?guid=4ff42de6-5936-11df-8837-0022190362dd>

⁴ <http://novosti.az/politics/14305.html>

ճշգրտումներ արվեցին Քրեական օրենսգրքի «Պետական գաղտնիքի տարածման» մասին հոդվածում, որի համաձայն՝ «պետական գաղտնիք հանդիսացող ինֆորմացիայի հրապարակման համար (եթե այն չի պարունակում պետական դավաճանության նշաններ), սպառնում է 3-6 տարի ազատազրկում (նախկինում՝ 2-5)»: Իսկ ըստ «ԶԼՄ-ի մասին օրենքի», «եթե այդ գործողությունները ծանր հետևանքներ են ունեցել, այդ դեպքում՝ 4-8 տարի ազատազրկում, նախկին 3-7 տարվա փոխարեն»: Բացի այդ, Քրեական օրենսգրքում մեկ այլ փոփոխություն կատարվեց, այն համարվեց նաև մեկ հոդվածով, որի համաձայն՝ «Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների կամ իրերի բռնի ուժով կամ հարկադրման, խաբեության, գողության կամ տեխնիկական միջոցներով ձեռք բերելու համար նախատեսվում է 2-5 տարի ազատազրկում»⁵:

Քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններով պատիժներ սահմանվեցին սոցիալական ցանցերում նախագահի հասցեին վիրավորական կամ նսեմացնող արտահայտություններ անողներին, որոնց համար նախատեսվում է մինչև \$1000 տուգանք, ուղղիչ աշխատանքային գաղութ կամ մինչև երեք տարի ազատազրկում: Ընդ որում, առավել խիստ պատիժ է սահմանվում այն օգտատերերի համար, որոնք հանդես են գալիս կեղծանուններով: Օրենքի փոփոխությամբ Ադրբեջանի նախագահի աշխատակազմն առաջարկում է չսահմանափակվել միայն համացանցով, այլ պատիժներ կիրառել նաև հրապարակային ելույթների ընթացքում, համացանցում, լրատվամիջոցներում Իլիամ Ալիևի արժանապատվությունը նվաստացնող կամ ոտնահարող անձանց նկատմամբ⁶:

Օրենսդրական փոփոխության մեկ այլ օրինակ են 2015թ. փետրվարին «ԶԼՄ-ի մասին օրենք»-ում կատարվող փոփոխությունների առաջարկները, որոնք արժանացան նախագահի հավանությանը. համաձայն դրանց՝ «ցանկացած լրատվական կազմակերպություն կարող է փակվել այն դեպքում, եթե ֆինանսավորում է ստանում արտերկրից կամ տարվա մեջ 2 անգամ մեղադրվում է զրպարտության, կողմնակալ տեղեկատվության տրամադրման մեջ»⁷:

⁵ www.kavkaz-uzel.eu/articles/258417/

⁶ <https://www.azatutyun.am/a/28440683.html>

⁷ <https://www.rferl.org/a/azerbaijan-alieyv-law-on-mass-media/26829860.html>

Բացի օրենսդրական դաշտում իրականացվող քայլերից, գրանցվեցին իշխանությունների կողմից անկախ ԶԼՄ և ընդդիմադիր հայացքներ ունեցող լրագրողների նկատմամբ կիրառվող և աստիճանաբար ավելի խստացվող գրաքննության դեպքեր:

Լրատվամիջոցների գործունեության կասեցում, կայքերի արգելափակում. Միայն 2017թ. մայիսին «Էլեկտրոնային անվտանգության կենտրոնի ներկայացրած հայցի համաձայն՝ արգելափակվեցին «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական մասնաճյուղի, «Azadliq» լրատվամիջոցի, ընդդիմադիր «Meydan TV» ինտերնետ-հեռուստարձևերության կայքերը, ինչպես նաև «Turan TV» վիդեոալիքի և «Azərbaycan saatı» («Ադրբեջանի ժամ») կայքերը⁸, որոնք հասանելի են միայն այլ երկրներից մուտք գործելու դեպքում: 2017թ. հետապնդումներ սկսվեցին նաև անկախ համարվող «Turan» լրատվական գործակալության նկատմամբ. հարկեր չվճարելու պատրվակով իրավապահ մարմինները խուզարկություններ իրականացրին գործակալության գրասենյակում: Արդյունքում՝ սառեցվեցին գործակալության բանկային հաշիվները: 2017թ. օգոստոսին «Turan» գործակալության ղեկավարի ձերբակալությունից հետո ժամանակավորապես կասեցվեցին գործակալության աշխատանքները: Թեև հետագայում այն վերաբացվեց, այդուհանդերձ, գործակալության և դրա ղեկավարի նկատմամբ հետապնդումները չդադարեցին:

Լրագրողների և կայքերի խմբագրերի հետապնդումներ, ձերբակալություններ. Ադրբեջանում բազմաթիվ են անկախ լրագրողների հետապնդումների, ձերբակալությունների դեպքերը: Բաքվում 2014թ. ձերբակալվել է «Zerkalo.az» թերթի քաղաքական մեկնաբան Ռատուֆ Միրկադիրովը, որը մեղադրվել է Հայաստանի օգտին լրտեսություն կատարելու (պետական դավաճանության) մեջ⁹: Մեկ այլ օրինակ է «Turan» գործակալության ղեկավար Մեման Ալիևի ձերբակալությունը (2017թ.)¹⁰, կամ՝

⁸ <http://www.bbc.com/russian/news-39897049>

⁹ Լրագրողը 2 տարի բանտում անցկացնելուց հետո՝ 2016թ., ազատ է արձակվել: Ռ.Միրկադիրովի վեց տարվա ազատազրկման դատավճիռը փոխարինվել է պայմանական պատժաչափով, <https://www.azatutyun.am/a/27618981.html>

¹⁰ ԱՄՆ պետդեպարտամենտն անդրադարձել է Ադրբեջանում հարկերից խուսափելու մեղադրանքով ձերբակալված և 3 ամսվա ազատազրկման ենթարկված՝ «Turan» լրատվական գործակալության տնօրեն Մեման Ալիևի գործին և Ադրբեջանի իշխանություններից պահանջել ազատ արձակել նրան: Մեման Ալիևը ձերբակալությունից մոտ մեկ ամիս անց ազատ էր արձակվել: <http://yerkirmedia.am/region/turan-aliev-azat-ardzakum/>

«Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայության լրագրող Խադիջա Իսմայլովայի ձեռքակալությունը 2014թ.¹¹:

Լրագրողներին մեղադրում են «գրպարտության», «պետական դավաճանության», «պետական գաղտնիքի տարածման» մեջ, նրանց հետապնդում և ձերբակալում են: Բացի այդ, լրագրողներին և գործակալությունների ղեկավարներին առաջադրվում են հարկեր չվճարելու և պաշտոնեական լիազորությունների չարաշահման, երբեմն նաև թմրանյութերի տարածման մեղադրանքներ, մինչդեռ ձերբակալությունների իրական պատճառն առնչվում է լրագրողների մասնագիտական գործունեությանը: Հետապնդումների են ենթարկվում մասնավորապես լրագրողական հետաքննություններ անցկացնող, ընդդիմադիր հայացքներ ունեցող, իշխանությունների մասին քննադատական, մարդու իրավունքների խախտման դեպքերի մասին տեղեկատվություն ներկայացնող լրագրողները: Լրագրողների նկատմամբ ուժային կառույցների կողմից իրականացվող գործողությունները ստիպում են ՋԼՄ ներկայացուցիչներին խուսափել երկրի ներքին և արտաքին քաղաքականությանն առնչվող սուր թեմաների բարձրաձայնումից:

Վերահսկողություն խրախուսման միջոցով. Այս ուղղությամբ աշխատանքներ է տանում հիմնականում *ՋԼՄ զարգացման աջակցության պետական հիմնադրամը*: Ազգային մամուլի օրվա առթիվ նախագահ Ի.Ալիևի կողմից լրագրողներին հատկացվել է 255 բնակարան: Այդ նույն օրը տրվել է ծրագրի երկրորդ փուլի մեկնարկը¹²: Անկախ լրագրողներն այս քայլը ևս համարում են վերահսկողություն սահմանելու և լրագրողներին ազատ գործելու իրավունքից զրկելու միջոց: Խրախուսման մեկ այլ օրինակ է նույն հիմնադրամի կողմից հայտարարված «*Լավագույն լրագրողական էսսե*» մրցույթը (2016թ.) և հաղթողներին մրցանակների շնորհումը:

¹¹ Խադիջա Իսմայլովայի ձերբակալվել էր Ադրբեջանի իշխող վերնախավում կոռուպցիայի փաստերի վերաբերյալ լրագրողական հետաքննություն անցկացնելու պատճառով: Արևմտյան պետությունների կողմից ադրբեջանական իշխանությունների վրա ճնշումների արդյունքում 2016թ. լրագրողի պատիժը, մեկուկես տարի բանտում անցկացնելուց հետո, փոխարինվեց պայմանական ազատագրվմամբ: <https://www.azatutyun.am/a/28757617.html>

¹² <https://news.day.az/politics/916489.html>

Հարկ է նշել, որ իշխանությունները պարբերաբար նաև ֆինանսական մեծ միջոցներ են հատկացնում այն մասնավոր լրատվամիջոցներին, որոնք աջակցում են պետական տեղեկատվական քաղաքականությանը: Մյուս կողմից՝ «ոչ ցանկալի լրատվամիջոցների» նկատմամբ կիրառվում է տնտեսական սահմանափակումների քաղաքականություն (սառեցվում են բանկային հաշիվները, սահմանափակվում են գլխավոր եկամուտի աղբյուր հանդիսացող գովազդի տեղադրման հնարավորությունները, արգելվում է ֆինանսավորումն արտերկրից):

Այսպիսով, չնայած Ադրբեջանի իշխանությունները հռչակում են, որ *«պետությունը բոլոր հնարավորությունները ստեղծել է ազատ մամուլի ձևավորման և գործունեության»* համար, գործնականում տարբեր մեխանիզմների միջոցով տոտալ վերահսկողություն սահմանելուն միտված քայլեր են ձեռնարկվում: Բացի օրենսդրական և տնտեսական վերահսկման ձևերից և լրատվամիջոցների ներկայացուցիչների հետապնդումներից, երկրում գործում են տեղեկատվության հասանելիության սահմանափակումներ՝ տեղեկատվության ընտրողական տրամադրման և տեղեկատվական հոսքերի ուղղորդման միջոցով, ինչը ևս մեղիա-դաշտի վերահսկման մեխանիզմներից է:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ
ՄԵԴԻԱ-ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Արեստակես Սիմավորյան**

Արտերկրի համայնքներում սեփական մեդիաների ստեղծման, համացանցում տեղեկատվական ռեսուրսների հարստացման գործը կարևոր տեղ է զբաղեցնում Ադրբեջանի պետական քաղաքականությունում: Համայնքների և սփյուռքի հետ համագործակցությանը միտված կառույցների առջև խնդիր է դրված արտերկրում աշխատանքներ իրականացնել թերթերի, ամսագրերի, պարբերականների հրատարակման, ռադիոհեռուստատեսության և տեղեկատվական գործակալությունների հիմնադրման ուղղությամբ: Պատահական չէ, որ այս ոլորտին վերաբերող հարցերը տեղ են գտել ադրբեջանական սփյուռքին նվիրված համաժողովների օրակարգում, հետևաբար այս ուղղությամբ համակարգված աշխատանքներ կատարելու համար ընդունվել են կոնկրետ որոշումներ՝ խթանելով տեղեկատվական ոլորտում պետություն-սփյուռք փոխգործակցությունը:

Տիպաբանության և թեմատիկ ուղղվածությունների տեսանկյունից ադրբեջանական սփյուռքի տեղեկատվական ռեսուրսներն աչքի են ընկնում բազմազանությամբ: Ըստ էության, տպագիր նյութերի, ռադիոհեռարձակումների և համացանցային ռեսուրսների թեմատիկ բովանդակությունը կախված է դրանց ռազմավարական նպատակներից, ֆինանսական և նյութատեխնիկական միջոցներից, լսարանից, տեղեկատվության հասանելիությունից, մասնագիտական (լրագրողական) ռեսուրսներից և բազմաթիվ այլ գործոններից: Մեր դիտարկումներից ելնելով՝ փաստենք, որ տպագիր և հեռարձակվող նյութերը ներկայացնում են ադրբեջանական տեսակետները և վերաբերում են.

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար:

- Ադրբեջանի Հանրապետության քաղաքականությանն ու սոցիալ-տնտեսական իրադրությանը,
- սփյուռքի կազմակերպչական հիմնախնդիրներին,
- համայնքապատկան կառույցների գործունեությանը, համայնքային միջոցառումներին (մշակութային, մարզական, կրթական),
- միգրանտների կրթական, առողջապահական և իրավական հարցերին,
- մշակութային ժառանգությանն ու պատմությանը,
- արցախյան հակամարտությանը և այլն:

Նման նյութերի տարածմամբ (կախված գտնվելու վայրից՝ ներկայացվում են տարբեր լեզուներով) ադրբեջանական սփյուռքի տեղեկատվական ռեսուրսները միտված են՝ միջազգային հանրության շրջանում զբաղվել Ադրբեջանի PR-ով, իրականացնել ճանաչողական բնույթի աշխատանքներ միգրանտների շրջանում (իրավական և այլ), նպաստել համայնքների անդամների ինտեգրմանը տվյալ երկրի սոցիումում, կազմակերպել համայնքի առօրյան, համաշխարհային հանրությանը հասցնել Ադրբեջանի մասին «ճշմարտությունները», մասնավորապես՝ տվյալ երկրի հանրության շրջանում տարածել արցախյան հակամարտության, Խոջալուի դեպքերի վերաբերյալ սեփական թեզերն ու մեկնաբանությունները: Ինչ վերաբերում է տիպաբանությանը, ապա դրանք հետևյալն են.

- *Համացանցային ռեսուրսներ* - էլեկտրոնային մամուլ, համայնքային կառույցների կայքէջեր, սոցցանցեր,
- *տպագիր մամուլ* - շաբաթաթերթեր, ամսագրեր, պարբերականներ և այլն,
- *հեռուստաընկերություններ* - «*InterAz TV*» (ՌԴ), «*RusLana TV*» (ՌԴ), «*Butov TV*» (Շվեդիա), «*DiasporaTV*» և «*Diaspora Vision*» (Ուկրաինա), «*Teas TV*» (Եվրոպա). վերջին երեքը գործում են առցանց,
- *ռադիո* - «Ադրբեջան ռադիո» (Գերմանիա, հիմն. 2002թ.), «Ադրբեջանական ռադիո» (Դանիա), «Ադրբեջանի ձայն» ռադիո (Ֆրանսիա,

հիմն. 2004թ.), «Ադրբեջանի ձայն» ռադիո (Շվեյցարիա, հիմն. 2004թ.), «Ադրբեջանական ձայն» ռադիո (Նորվեգիա, հիմն. 2006թ.)¹:

Ոլորտի գործընթացների տրամաբանական շարունակությունն էր տեղեկատվական քաղաքականության մշակման հիմնադրամի (համակարգող կենտրոն) ստեղծման գաղափարի առաջադրումը: Գաղափարը հնչել է 2016թ. Աշխարհի ադրբեջանցիների IV համագումարի նիստում և արժանացել է հավանության: Նախատեսված է, որ այն ունենալու է առանձին բյուջե, ուր մեկտեղվելու են առաջին հերթին արցախյան հակամարտությանը վերաբերող էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսները, փաստաթղթերը, գիտական մշակումները, հետազոտությունները, հրատարակությունները, ֆիլմերը և այլն: Նախատեսվում է ներգրավել ադրբեջանական պետական կառույցներին, տեղեկատվական գործակալություններին և գիտական հաստատություններին, ինչպես նաև սփյուռքի մարդկային և նյութական ռեսուրսները²:

Վերոհիշյալ ուղղությամբ աշխատանքների անհրաժեշտությունը բացատրվում էր նրանով, որ երկրի սահմաններից դուրս տեղեկատվական պատերազմներում Ադրբեջանը տանուլ էր տալիս ՀՀ-ին և հայկական սփյուռքին, և ըստ այդմ՝ կարիք կար «ադրբեջանական ձայն» ավելի լսելի դարձնել միջազգային հանրության համար: Սակայն խորքային առումով ադրբեջանական իշխանությունները միջնաժամկետ հեռանկարում խնդիր են դրել ոչ միայն համակարգել, այլև վերահսկել և ուղղորդել սփյուռքյան մեդիաների աշխատանքային գործունեությունը: Եթե տեղեկատվական ոլորտում պետություն-սփյուռք համագործակցության նպատակով համակարգող մարմնի ստեղծման նախագիծը կյանքի կոչվի

¹ Ադրբեջանական սփյուռքի մեդիա-ռեսուրսների և դրանց դերի վերաբերյալ մանրամասն տե՛ս Xaricdə diasporumuzun media fəaliyyətinə qənaətbəxş saymaq olar (03.29.2016), http://www.sherg.az/site/id-15009/Az%C9%99rbaycan_h%C9%99qi%C9%99t%C9%99ri_d%C3%BCnyaya_yay%C4%B1l%C4%B1r#.WcIaBNJ-rGh, *Г.Новрузова*, Информационные ресурсы Азербайджанской Диаспоры России (12.23.2013), <http://www.novoye-vremya.com/w28475/.../#.WdodMFrDc> և *Mamedov R.R.*, Problem of Nagorny Karabakh and Azerbaijan Diaspora, Перспективы науки, N. 3 (42), 2013, с. 66-69.

² Азербайджанская диаспора создаст специальный фонд и координационный центр связи с информационной войной (04.06. 2016), http://ru.apa.az/azerbaydjanskaya_diaspora/azerbajdzhanskaya-diaspora-sozdast-specialnyj-fond-i-koordinacionnyj-centr-s-vyazi-s-informacionnoj-vojnoj.html

(ներկայում նախագիծը քննարկման փուլում է), ապա այն կգործի որպես օպերատիվ արձագանքման կենտրոն:

Ոլորտում առկա խնդիրներից են համայնքային կառույցներին պատկանող պաշտոնական մամուլն ու դրա գործունեությունը լուսաբանող կայքերը (տպագիր և էլեկտրոնային): Սփյուռքյան տեղեկատվական-վերլուծական պորտալները թեև աչքի էին ընկնում կայուն և ակտիվ գործունեությամբ և ներկայացված էին կիրառելի, այդուհանդերձ, ժամանակի ընթացքում դրանց մի մասն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով (տեխնիկական, ֆինանսական և այլն) չի գործում: Նկատելի է նաև, որ լրատվական, անգամ ոչ երկրորդական նշանակության համայնքային կառույցների կայքէջերը հինգ-վեց, երբեմն տասը տարվա կտրվածքով չեն թարմացվում:

Մեկ այլ հարց է, թե որքանով են դրանք ազդեցիկ համայնքային կյանքում (նաև տվյալ պետության հանրության շրջանում) և ինչ դերակատարում կարող են ունենալ: Հասանով Անար Մովսում օղլին, վերլուծելով ադրբեջանական սփյուռքի մաս-մեղիայի գործունեության մի շարք ասպեկտներ, նկատում է, որ, օրինակ, ՌԴ ադրբեջանական սփյուռքի լրատվամիջոցները, սփյուռքի ներսում լայն շփում ապահովող հաղորդակցային գործառույթի իրականացման ազդեցության տեսանկյունից, էֆեկտիվ չեն: Հեղինակի կարծիքով՝ Ռուսաստանի տարածքում հրատարակվող բազմաթիվ ադրբեջանական պարբերականներից ընդամենը մի քանիսն են պահանջված, այն էլ՝ առանձին խմբերի շրջանում: Խնդիրն այն է, որ ի տարբերություն հնաբնակների, որոնք Ռուսաստանում հաստատվել են խորհրդային շրջանում և կազմում են սփյուռքի միջուկը, 1990-ական թթ. այստեղ հաստատված միգրանտների ռուսերենի իմացությունը ցածր մակարդակի է: Նրանք չեն ընթերցում ռուսալեզու, այդ թվում համայնքային մամուլը: Այդ պատճառով նորաբնակները նախընտրում են ադրբեջաներեն հրատարակումները, որտեղ, սակայն, բավարար չափով չեն լուսաբանվում ինտեգրացիոն խնդիրները³: Ոլորտի խնդիրներն, իհարկե, չեն սահմանափակվում վերը բերված մի քանի օրինակներով:

³ *Гасанов Анар Мовсум оглы*, Тенденции развития СМИ азербайджанской и армянской диаспор РФ, https://lomonosov-msu.ru/archive/Lomonosov_2007/09/gasanovanar.doc.pdf, տե՛ս նաև *Гасанов Анар Мовсум оглы*, Средства массовой информации диаспор в структуре этнической журналистики: на примере средств массовой информации азербайджанской диаспоры в России, 2007, Москва.

Ամփոփելով մեր որոշ դիտարկումները՝ նշենք, որ կարևորելով, քարոզչական նպատակով վիրտուալ տիրույթի օգտագործումը, ԱՀ պետական կառույցները սփյուռքի հետ մեկտեղ տեղեկատվական-քարոզչական ոլորտում ձգտում են գործել ընդհանուր տրամաբանության մեջ: Այն հիմնական ուղղությունները և օրակարգը, որոնք ձևավորվում են Ադրբեջանում, գերազանցապես պայմանավորում և կարգավորում են նաև սփյուռքում գործող այն լրատվամիջոցների գործունեությունը, որոնք ստեղծվել և ֆինանսավորվել են պետական աջակցությամբ, և այն խմբերի կողմից, որոնք սատարում են Ադրբեջանի ներկայիս իշխանություններին:

Մինևույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ հայ-ադրբեջանական հակամարտությունն ընթանում է նաև տեղեկատվական տիրույթում, անհրաժեշտ է առանձին ուսումնասիրությունների միջոցով վեր հանել ադրբեջանական սփյուռքի «մեդիա-զինանոցին» առնչվող բոլոր հիմնահարցերը, գնահատել դրանց քանակական և որակական առանձնահատկությունները:

ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՆԴԵՊ

Վահրամ Հովյան

Իրանական գիտական սփյուռքի ձևավորումը պայմանավորված է եղել երկու հիմնական գործոնով՝ միջուկային և հրթիռաշինական ծրագրեր և «ուղեղների արտահոսք»:

Միջուկային և հրթիռաշինական ծրագրերը սկիզբ են առնում 1950-ական թթ., երբ շահական վարչակարգը ձեռնամուխ եղավ երկրի համապարփակ արդիականացմանը: Այն ժամանակ Իրանը հանդիսանում էր Արևմուտքի՝ ԱՄՆ գլխավորությամբ, հիմնական դաշնակիցներից մեկը Մերձավոր Արևելքում: Հետևաբար, վերջինս շահագրգռված էր այդ երկրի հզորացմամբ: Եվ պատահական չէ, որ Իրանում ինչպես միջուկային, այնպես էլ բազմաթիվ այլ գիտատար ուղղությունների հիմնադրման հետևում կանգնած էր հենց ԱՄՆ-ը:

Միջուկային, հրթիռաշինական և այլ գիտատար ուղղությունների զարգացումն անխուսափելիորեն ենթադրում էր համապատասխան կադրերի պատրաստում, որի միակ ճանապարհն այդ ուղղությունները սպասարկող գիտակարգերում (ֆիզիկա, ճարտարագիտություն և այլն) իրանցի երիտասարդների ուսումնառությունն էր արևմտյան (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա և այլն) բուհերում: Հետևաբար, «Միջուկային ծրագրի իրականացման համար իրանական ղեկավարությունը մեծ նշանակություն տվեց միջուկային ֆիզիկայի և միջուկային օբյեկտների կառավարման տեխնիկայի ոլորտում իրանցի մասնագետների պատրաստմանը»¹: Եվ ահա, 1950-ական թվականներից, Իրանի և Արևմուտքի համագործակցությամբ, սկիզբ դրվեց իրանցի ուսանողների զանգվածային ուսումնա-

¹ Նորավանք ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ:

¹ *Саруханян С.Н.*, Россия и Иран. 10 лет ядерного сотрудничества, Ер., «Гаспринт», 2006, с. 42.

ռուբլյանն արևմտյան լավագույն համալսարաններում: «Ապագա իրանցի մասնագետների պատրաստումն իրականացրին ԱՄՆ-ը, Բելգիան, Մեծ Բրիտանիան, ԳՖՆ-ն, Իտալիան, Շվեյցարիան և Ֆրանսիան»²:

1977թ. 30-40 հազար իրանցի (ԱՄՆ պետդեպարտամենտի գնահատականներով) սովորում էր ամերիկյան քոլեջներում³, ընդ որում՝ նրանց մի մասը սովորում էր միջուկային ֆիզիկայի և հրթիռաշինության հետ կապված մասնագիտություններով: 1970-77թթ. ամերիկյան չորս առաջատար միջուկային արտադրանք թողարկող ընկերություններում պատրաստվել է 35 իրանցի մասնագետ⁴:

1977-78թթ. ուսումնական տարում արտասահմանում սովորող իրանցի ուսանողների թիվը հասնում էր մոտ 100 հազարի, որից 36 հազ. 220-ը սովորում էր ԱՄՆ-ում: Մնացյալն ուսումը ստանում էր հիմնականում Մեծ Բրիտանիայի, Արևմտյան Գերմանիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի, Իտալիայի բուհերում: Հաջորդ տարի՝ 1978-79 ուստարում, ԱՄՆ-ում սովորող իրանցի ուսանողների թվաքանակը հասավ 45 հազ. 340-ի և գազաթնակետին հասավ հաջորդ տարի՝ 1979-80 ուստարում (51 հազ. 310): Համաձայն Կրթության միջազգային ինստիտուտի տվյալների՝ այս ժամանակահատվածում իրանցիներն ԱՄՆ-ում սովորող արտասահմանյան ուսանողների մեջ թվաքանակով առաջին տեղում էին⁵: 1979թ. իսլամական հեղափոխության նախօրեին մոտ 100 հազ. իրանցի ուսանող էր սովորում աշխարհի (հիմնականում՝ ԱՄՆ) լավագույն համալսարաններում⁶:

Միաժամանակ, լուրջ ուշադրություն էր դարձվում նաև ռազմական կրթությանը՝ արտասահմանում Իրանի բանակի համար սպայական կադրերի պատրաստմանը: ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և այլ երկրների ռազմաուսումնական հաստատություններում պատրաստվել է Իրանի

² Նույն տեղում:

³ Sober S., The US and Iran, an Increasing Partnership, www.sedona.net (հղումը՝ ըստ *Տարուխանյան Շ.Կ.*, նշվ. աշխ., էջ 42):

⁴ *Новиков В.Е.*, Состояние и перспективы развития ядерных и ракетных технологий в Иране // В сб. *Иран в современном мире*, М., РИСИ, 2003, с. 146 (հղումը՝ ըստ *Տարուխանյան Շ.Կ.*, նշվ. աշխ., էջ 42):

⁵ *Shirin Hakimzadeh*, Iran: A Vast Diaspora Abroad and Millions of Refugees at Home, <http://www.migrationpolicy.org/article/iran-vast-diaspora-abroad-and-millions-refugees-home>

⁶ *Sam Sasan Shoamaneh*, Iran is a riddle, wrapped in a mystery, inside an enigma. But what of the over three million Iranians outside Iran?,

<http://globalbrief.ca/blog/2009/11/01/on-the-iranian-diaspora/>

ԶՈւ սպայակազմի նշանակալի մասը: 1976թ., օրինակ, ԱՄՆ-ում ուսում էր ստանում գրեթե 3 հազար իրանցի զինծառայող⁷:

1979թ. իսլամական հեղափոխությունից հետո արտասահմանում սովորող ուսանողների այս հսկայական զանգվածի գերակշիռ մասը չվերադարձավ Իրան՝ կազմելով այդ երկրի գիտական սփյուռքը: «Արևմուտքում պատրաստված մասնագետների մեծ մասը,- նշում է փորձագետը,- իսլամական հեղափոխությունից հետո արտագաղթեց, իսկ ուսանողները, որոնք դեռևս շարունակում էին ուսումն Արևմուտքում, կրկին մեծ մասամբ չվերադարձան հայրենիք»⁸: Բացի նոր հաստատված իսլամական վարչակարգի անընդունելիությունից, մասնագետների արտագաղթի պատճառ էր նաև միջուկային ծրագրերի ժամանակավոր կասեցումը:

Հետագայում, վերսկսելով միջուկային ծրագրերը՝ համապատասխան կադրերի ապահովման խնդիրը լուծելու համար ԻԻՀ ղեկավարությունը, ի թիվս այլ ուղղությունների, փորձեց շեշտադրում կատարել նաև հետևյալ ուղղությունների վրա՝ ա) արտասահմանում գտնվող իրանցի մասնագետների հայրենադարձություն, բ) վերջիններիս հետ բացահայտ կամ քողարկված համագործակցություն և գ) երիտասարդ իրանցիների մասնագիտական պատրաստում արտերկրում⁹:

Իսլամական հեղափոխությունից հետո, երբ դադարեցվեց միջուկային և գիտատեխնիկական այլ ոլորտներում Արևմուտք-Իրան համագործակցությունը, որոշ ժամանակ անց Իրանը սկսեց նոր գործընկերներ փնտրել միջուկային ծրագրերի իրականացման համար: Երկարատև փնտրտուքից և տարբեր երկրների (եվրոպական երկրներ, Ճապոնիա և այլն) հետ բանակցություններից հետո ընտրությունը կանգ առավ սկզբնական շրջանում Չինաստանի, ապա Ռուսաստանի վրա: Վերջիններիս հետ համագործակցությունը նույնպես ենթադրում էր միջուկային ոլորտում իրանցի մասնագետների պատրաստում: Այսպես, «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման մասին» 1992թ. օգոս-

⁷ *Ермаков С.М.*, Перспективы развития вооруженных сил Ирана // В сб. Иран в современном мире, М., РИСИ, 2003, с. 92. (հղումը՝ ըստ *Саруханян С.Н.*, նշվ. աշխ., էջ 42):

⁸ *Саруханян С.Н.*, նշվ. աշխ., էջ 42:

⁹ *Задонский С.М.*, Ядерная программа Ирана и российско-иранские отношения, М.: ИИИБВ, «АСТИ-ИЗДАТ», 2002, с. 6-7.

տոսի 25-ի ռուս-իրանական համաձայնությամբ ի թիվս այլ բաների նախատեսվում էր՝ ա) միջուկային հետազոտական և էներգետիկ ռեակտորների նախագծում, կառուցում և շահագործում, բ) միջուկային ռեակտորներում և դրանց վառելիքային ցիկլներում օգտագործման համար անհրաժեշտ բաղադրիչների և նյութերի արդյունաբերական արտադրություն, գ) նախագծում և **ուսուցում** (ընդգծումը մերն է- Վ.Հ.)¹⁰: Ըստ նույն համաձայնության՝ Ռուսաստանում միջուկային ֆիզիկայի ոլորտում տարեկան պատրաստում պետք է անցնեն ԻԻՅ մինչև 100 քաղաքացի¹¹: Ռուսական մամուլում 2003թ. հրապարակված մի տեղեկատվության համաձայն՝ 1999-2003թթ. Նովովորոնեժյան ուսումնա-մարզումային կենտրոնում ուսուցում էր ստացել արդեն 707 մարդ¹²:

Չնայած Իրանից ուսման նպատակով երիտասարդների արտահոսքն արտասահմանյան երկրներ տեղի է ունենում հիմնականում այդ երկրի միջուկային և հրթիռաշինական ծրագրերի շրջանակներում, այնուամենայնիվ, պետությունը, ելնելով իր գերակայություններից, խրախուսում է նաև այլ ոլորտներում (ռազմագիտություն, բժշկություն և այլն) իրանցի երիտասարդների ուսումն արտերկրում: Օրինակ՝ 2000-ական թվականներից, պայմանավորված գիտատեխնիկական ոլորտում ռուս-իրանական համագործակցության ակտիվացմամբ, Ռուսաստանի գիտակրթական հաստատություններում սովորող իրանցի ասպիրանտների թվաքանակը մեծացավ: Վերջիններս խորացնում են իրենց մասնագիտական գիտելիքները հիմնականում կիրառական հիմնարար բնագիտական գիտակարգերում և բժշկագիտության մեջ¹³:

Չնայած իսլամական հեղափոխությունից հետո Արևմուտքի երկրների հետ Իրանի հարաբերությունների վատթարացմանը և գիտատեխնիկական (հատկապես միջուկային) ոլորտում համագործակցության դադարեցմանը, իրանցի ուսանողների կրթությունն արևմտյան բուհերում շարունակվեց դրանից հետո նույնպես: Ներկայում էլ քիչ չեն արտա-

¹⁰ Михайлов В.Н., Домыслы и факты о сотрудничестве России и Ирана в области мирного использования атомной энергии // www.iss.niit.ru (հղումը՝ ըստ *Саруханян С.Н.*, նշվ. աշխ., էջ 89):

¹¹ *Саруханян С.Н.*, նշվ. աշխ., էջ 94:

¹² Стажеров тренируют на настоящей АЭС, <https://www.vesti.ru/doc.html?id=103287>

¹³ Иранская община в Москве, <http://islamist.ru/иранская-община-в-москве/>

սահմանյան բուհերում սովորող իրանցի ուսանողները: Վերջիններիս հսկայական թվաքանակը նույնպես թույլ է տալիս պատկերացում կազմել իրանական սփյուռքի գիտական ներուժի մասին: Այսպես, Իրանի կառավարության տվյալներով՝ 2013թ. արտասահմանյան բուհերում կրթություն ստացող իրանցի ուսանողների թվաքանակը կազմում էր 55 հազ. 686: Ըստ երկրների՝ այն ուներ հետևյալ պատկերը: Առաջին տեղում Մալայզիան էր, որտեղ սովորում էր 8 հազ. 883 իրանցի ուսանող, հաջորդում էին Միացյալ Նահանգները (7 հազ. 341 ուսանող), Կանադան (5 հազ. 638 ուսանող), Գերմանիան (3 հազ. 504 ուսանող), Թուրքիան (3 հազ. 364 ուսանող), Մեծ Բրիտանիան (3 հազ. 228 ուսանող): Մնացած հատվածը սովորում էր այլ երկրներում¹⁴: Իսկ համաձայն Իրանի կրթության նախարարության գնահատականների՝ 2014թ. դրությամբ արտասահմանում կրթություն ստացած իրանցիների թվաքանակը կազմում էր 350-500 հազ.¹⁵:

«Ուղեղների արտահոսքը» բնորոշ է եղել Իրանից արտագաղթի բոլոր ալիքներին էլ (սկսած 1950-ական թթ.), չնայած ժամանակի ընթացքում դրա ցուցանիշների որոշակի վերելքներին ու վայրէջքներին: Համաձայն Արժույթի միջազգային հիմնադրամի 2006թ. տվյալների՝ տարեկան 150-180 հազ. կրթված մարդկանց արտագաղթի ցուցանիշով Իրանը 91 զարգացող և զարգացած երկրների մեջ զբաղեցնում է առաջին տեղը¹⁶: Համաձայն մի փորձագիտական գնահատականի՝ միջազգային գիտական օլիմպիադաներում մրցանակներ շահած իրանցիների 80%-ը նախընտրում է մեկնել ԱՄՆ, Կանադա և Եվրոպա¹⁷: Իսկ համաձայն Իրանի գիտության, հետազոտությունների և տեխնոլոգիաների նախարարության (*Ministry of Science, Research and Technology*) գնահատականների՝ մարդկային կապիտալի արտահոսքն այդ երկրի կառավարության վրա տարեկան արժենում է \$38 մլրդ, ինչը երկու անգամ գերազանցում է նավթի վաճառքից ստացվող եկամուտը¹⁸:

¹⁴ Iranian diaspora, https://en.wikipedia.org/wiki/Iranian_diaspora

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Shirin Hakimzadeh, նշվ. աշխ.:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում; Sam Sasan Shoamaneh, նշվ. աշխ.:

Միջուկային, հրթիռաշինական և գիտատար այլ ոլորտներում արտասահմանյան երկրներում կադրերի պատրաստման, ինչպես նաև առկա կադրերի հայրենադարձության քաղաքականությունը տվել է որոշակի արդյունքներ: Օրինակ՝ Իրանի ատոմային էներգիայի կազմակերպության առաջին նախագահ Ա.Էթեմադը կրթություն է ստացել Ֆրանսիայում՝ Սակլեի Միջուկային հետազոտությունների և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտում, և Շվեյցարիայում՝ Լոզանի պոլիտեխնիկական համալսարանում ու Միջուկային հետազոտությունների դաշնային ինստիտուտում: Նրա հաջորդ Ռ.Ամրոլահին «միջուկային ֆիզիկա» մասնագիտությամբ կրթություն է ստացել Թեքսասի համալսարանում, իսկ հետո պրակտիկա անցել Միջուկային հետազոտությունների բելգիական կենտրոնում¹⁹:

Հետևություններ հայ իրականության համար

Հայաստանը նույնպես վերջին տարիներին վարում է տաղանդավոր երիտասարդների ուսուցումն արտասահմանյան հեղինակավոր բուհերում հովանավորելու քաղաքականություն: Այդ նպատակով 2009թ. ստեղծվել է «Լույս» հիմնադրամը: Սակայն, ի տարբերություն իրանական փորձի, ՀՀ քաղաքականությունն այս հարցում երկար ժամանակ թիրախավորված չի եղել: Որպես հիմնական սկզբունք ընդունվել է բուհի վարկանիշը (առաջին տասնյակ աշխարհում): Անտեսվել է մասնագիտությունների հարցը, մասնավորապես, այն հարցը, թե պետության հաշվին տվյալ մասնագիտությունը ստացող ՀՀ քաղաքացին հետագայում ինչ հնարավորություններ է ունենալու՝ իր մասնագիտական գիտելիքները կիրառել հայրենիքում և հայրենադարձվել: Թերևս, այս է եղել հիմնական պատճառը, որ «Լույս» հիմնադրամն իր շահառուների առջև իրավական պարտավորություն չի դրել ուսումն ավարտելուց հետո գոնե որոշ ժամանակ համապատասխան մասնագիտությամբ աշխատել Հայաստանում:

Կարծում ենք, նման ընդհանրական քաղաքականության փոխարեն նպատակահարմար է որոշակիորեն տեղայնացնել գիտական սփյուռքի հետ տարվող քաղաքականությունում իրանական առավել թիրախավոր-

¹⁹ Хлопков А., Иранская ядерная программа в российско-американских отношениях // Научные записки ПИР-Центра, 2001, № 18, с. 40.

ված փորձը: Այսինքն՝ արտասահմանում հայաստանցի երիտասարդների ուսումը հովանավորելու հարցում շեշտադրումը կատարել այն մասնագիտությունների վրա, որոնք առավել են համապատասխանում ՀՀ տնտեսության առաջնահերթություններին: Դրա համար անհրաժեշտ է ա) հստակ որոշել տնտեսության, մասնավորապես՝ արդյունաբերության ոլորտի գերակա ուղղությունները (*IT* ոլորտ և այլն), բ) ֆինանսավորել միայն այն մասնագիտություններով հայաստանցի երիտասարդների ուսուցումն արտասահմանյան լավագույն բուհերում, որոնք առավել են համապատասխանում Հայաստանի տնտեսության և, մասնավորապես, գիտատար արդյունաբերության գերակայություններին:

Հարկ է նշել, որ «Լույս» հիմնադրամի գործունեության մեջ բոլորովին վերջերս նկատվում է ընդհանրական քաղաքականությունից ավելի թիրախավորվածին անցնելու միտում: Այս համատեքստում հատկապես կարևորվում է երկու քայլ: Նախ՝ այսուհետև ֆինանսավորվելու է այն մասնագիտություններով արտասահմանյան լավագույն բուհերում հայ երիտասարդների ուսումը, որոնք ընդգրկված են ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում: Եվ երկրորդ՝ այսուհետև հիմնադրամի շահառուները պարտավորվում են ուսումն ավարտելուց հետո երեք տարի աշխատել Հայաստանում:

Այնուամենայնիվ, պետության գերակա ուղղությունն էլ բազմաբովանդակ հասկացություն է: Մասնավորապես, կարող են գոյություն ունենալ գերակայության տարբեր աստիճաններ՝ առաջին, երկրորդ, երրորդ և այլն: Հետևաբար, կարելի է արտասահմանյան կրթության համար հատկացվող ֆինանսավորման չափերը համապատասխանեցնել այդ աստիճաններին՝ հետևյալ կերպ.

- առաջին աստիճանի գերակայություն՝ 80-100% ֆինանսավորում,
- երկրորդ աստիճանի գերակայություն՝ 50% ֆինանսավորում,
- երրորդ աստիճանի գերակայություն՝ 20% ֆինանսավորում:

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

Գազիկ Հարությունյան՝

«Նորավանքում» իրականացվող հետազոտություններում հատուկ ուշադրություն է հատկացվում կրիտիկական ենթակառուցվածքներին, այսինքն՝ այն ակտիվներին, ռեսուրսներին և ոլորտներին, որոնք վճռական նշանակություն ունեն ազգային անվտանգության և հասարակության գործունեության համար: Սկզբում շեշտադրվում էր Հայաստանի տեղեկատվական անվտանգության ոլորտը, սակայն շուտով պարզվեց, որ ամեն բան շատ ավելի բարդ է, քանի որ գրեթե անհնար էր լուծել կիրառական որևէ խնդիր՝ առանց ծագող հիմնախնդիրներն այլ ճյուղերի, ասենք՝ տնտեսական հնարավորությունների հետ կապելու: Ի վերջո աշխատանքների ընթացքում մենք եկանք այն եզրահանգման, որ բոլոր ոլորտներում կրիտիկական ենթակառուցվածքների իրական անվտանգությունը կախված է գիտատեխնոլոգիական (այստեղ ներառվում են նաև հումանիտար տեխնոլոգիաները) ոլորտի զարգացման մակարդակից, որն էլ կանխորոշում է մնացած կառուցվածքների զարգացումն ու անվտանգությունը: Այլ խոսքով՝ գիտատեխնոլոգիական ոլորտն ազգային անվտանգության հիմնարար կրիտիկական ենթակառուցվածքն է, իսկ մյուս տարրերն ածանցվում են նրանից: Այս հարցերը պարզաբանելու համար մի փոքր պատմական էքսկուրս կատարենք:

Ըստ չինացի ստրատեգների՝ այս կամ այն երկրի նվաճման ամենաարդյունավետ միջոցն այնտեղ կրթության սեփական համակարգի ներդրումն է: Նման մոտեցման շնորհիվ տարբեր ազգություններից ձևավորվեց միացյալ չինական կայսրությունը: Բայց միևնույն ժամանակ չինացիները, ինչպես և հույները հելլենիզմի դարաշրջանում (իսկ հետո այդ ավանդույթը շարունակեցին ռուսները), ոչ այնքան զարգացած հանրու-

՝ «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

թյուններին էին փոխանցում գիտելիքներ և դրանով իսկ նպաստում նրանց զարգացմանը: Իրավիճակը փոխվեց անդրօվկիանոսային գաղութների նվաճմամբ կայսրությունների կայացման դարաշրջանում, երբ խնդիր դարձավ ոչ թե լուսավորությունը չինական, հունական կամ ռուսական ձևով, այլ տարածքների նվաճումը և այդտեղից հումքի, իսկ երբեմն էլ՝ ստրուկների արտահանումը: Նոր կայսրություններ կերտողները, ելնելով «գիտելիքը ուժ է» բանաձևից, կտրականապես թույլ չէին տալիս, որպեսզի օտարները «մոտենան» իրենց գիտելիքներին, քանի որ դա կօգներ բնիկ ժողովուրդներին դիմադրություն ցույց տալ նվաճողներին: Այստեղ տեղին է մտաբերել Արնոլդ Թոյնբիի այն միտքը, թե Արևմուտքի գլխավոր գաղտնիքը նրա տեխնոլոգիաներն են: Նման քաղաքականության գրոտեսկային դրսևորումն էր Երրորդ ռեյխի «Օստ» (*Generalplan Ost*) պլանը, որի համաձայն՝ օկուպացված երկրների բնակչության կրթությունը սահմանափակվում էր չորս դասարանով:

Այսօր պոլիտկոռեկտ ձևով նույն քաղաքականությունն իրենց պոտենցիալ մրցակիցների հանդեպ իրականացնում են Առաջին Սառը պատերազմի հաղթողները: Կառավարման «քվազիլիբերալ» մեթոդների ներդրման միջոցով փլուզվեց երկար տարիների մշակված արդյունավետ գիտակրթական համակարգը: Արդի նեոգաղութարարները հետխորհրդային երկրներից ոչ միայն հումք, այլև հարյուր հազարավոր գիտնականներ ու ինժեներներ՝ «ներկրեցին»՝ իրենց գաղափարներով ու մտահղացումներով հանդերձ: Հետևանքները երկար սպասել չտվեցին, ինչը կարելի է ցուցադրել արտոնագրերի վերաբերյալ վիճակագրությամբ: Եթե 1981թ. ԽՍՀՄ-ում գրանցված էր 95.000 արտոնագիր, իսկ ԱՄՆ-ում՝ 62.000, ապա 1991թ. ԽՍՀՄ-ում գրանցվել էր ընդամենը 900 արտոնագիր, իսկ ԱՄՆ-ում՝ 96.000: 25 տարի անց իրավիճակը մի փոքր շտկվել է. 2016թ. ՌԴ-ում գրանցվել է մոտ 33.000 արտոնագիր, իսկ ԱՄՆ-ում՝ 303.000, այսինքն՝ «ընդամենը» 10 անգամ ավելի, քան Ռուսաստանում: Իսկ Հայաստանում արտոնագրերի թիվը սրընթաց իջնում է. եթե 2000թ. դրանց թիվը 168 էր, ապա 2016-ին՝ ընդամենը 93: Այս տարիներին աճ, Ռուսաստանից բացի, արձանագրել է միայն Բելառուսը, որը Ա.Լուկա-

շենկոյի կամային քաղաքականության շնորհիվ կարողացավ խուսափել իննսունական թվականների աղետից: Նշենք նաև, որ հետխորհրդային տարածքում մնացած գիտատեխնոլոգիական պոտենցիալի նվազեցման համար մշակվել և գործում են ծավալուն նախագծեր (օրինակ՝ *Silver Key*-ը), որոնց շրջանակներում խրախուսվում էին կեղծ ուղղություններով տարվող իմիտացիոն հետազոտությունները:

Մրցակիցների ապահովելու և կտուրալացման ռազմավարությունն այսօր իրականացվում է ոչ միայն հետխորհրդային տարածքում, այլև, օրինակ, Մեծ Մերձավոր Արևելքում, որտեղ կիրառվում են այնպիսի մեթոդներ, որոնք ավելի շուտ նման են *Generalplan Ost*-ի միջոցներին: Կարելի է պնդել, որ մրցակիցներին գիտատեխնոլոգիական ռեսուրսներից զրկելը դարձել է արդի հիբրիդային պատերազմների հիմնական նպատակը, որոնցում, համաձայն ԱՄՆ պաշտպանության նախարարության հետախուզական վարչության տնօրեն Վինսենթ Սթյուարտի, ***գլխավոր զենքն են լինելու դիմակայող կողմերի բանականությունը և իմացական կարողությունները:***

Հայտնի է, որ հենց գիտատեխնոլոգիական և տեխնոլոգիական պոտենցիալի զարգացման մակարդակն է ապահովում ԱՄՆ գերակայությունը համաշխարհային տնտեսությունում և քաղաքականությունում: Բնութագրական է, որ ամերիկացիներն ինչպես գիտատեխնոլոգիական, այնպես էլ արդյունաբերական ոլորտներում աշխատանքը վարում են պետական պլանավորման կոշտ ռեժիմով, իսկ պետական շատ գերատեսչություններում ստեղծված են համապատասխան մարմիններ: Անդրադառնանք, սակայն, ԵԱՏՄ ինտեգրացիոն գործընթացներին:

Իր գոյության ոչ երկար տարիների ընթացքում այս միությունն ապացուցեց իր գործունակությունը և հասավ նկատելի հաջողությունների: Միևնույն ժամանակ, «հիբրիդային» իրողությունների պայմաններում, երբ ռազմաքաղաքական, տեղեկատվական և տնտեսական բնույթի առճակատումները միահյուսվել են, անհնար է լուրջ զարգացում ունենալ առանձին վերցրած ոլորտում: Ակնհայտ է, որ լիբերալ գործիքաչափի կատարելագործումն առևտրային հարաբերություններում անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ ԵԱՏՄ երկրների տնտեսությունների ցանկա-

լի աճին և ինտեգրմանը հասնելու համար: Մրցունակության ապահովումը չորրորդ արդյունաբերական հեղափոխության պայմաններում հնարավոր է բացառապես արդի բազմապրոֆիլ գիտատեխնոլոգիական կառույցների ձևավորման պարագայում, որոնք կկատարեն, ինչպես վերը նշվեց, հիմնարար կրիտիկական ենթակառուցվածքների դեր: Հենց այդ ենթակառուցվածքները կկանխորոշեն ոչ միայն տնտեսության զարգացումը, այլև ընդունվող որոշումների որակը: Մինչդեռ, ԵԱՏՄ-ում ընդունվող որոշումներում բավական ցածր է գիտական բաղադրիչի մակարդակը: Իսկ դա 1980-90-ականների պարզունակ մտածողության շարունակությունն է, երբ շատերին թվում էր, թե լիբերալ մեթոդները կարող են լուծել տնտեսության բոլոր հիմնախնդիրները: Բնականաբար, նման հնացած մոտեցման պարագայում ինտեգրացիան դանդաղ կընթանա: Ուստի, մենք պնդում ենք, որ ԵԱՏՄ-ում ինտեգրացիոն գործընթացների կրիտիկական ենթակառուցվածք է հանդիսանում գիտատեխնոլոգիական բաղադրիչը, որը հարկ է ամրապնդել:

Ակնհայտ է, որ գուտ շուկայական մեխանիզմը չի կարող ապահովել ցանկալի զարգացումը, և անհրաժեշտ է կիրառել գիտության և տեխնիկայի զարգացման պետական միջոցներ, որոնք լայնորեն օգտագործվում են ԱՄՆ-ում, ԵՄ-ում և, առավել ևս, Չինաստանում: Ելնելով այս իրողություններից՝ խիստ հրատապ է դառնում ԵԱՏՄ երկրների համապատասխան գիտատեխնոլոգիական ռեսուրսների տվյալների շտեմարանի ստեղծման և նրանց գործունեության համակարգման հարցը՝ տնտեսապես շահավետ պատվերների միջոցով: Նման մեխանիզմի ներդրումը կհանգեցնի թե՛ ԵԱՏՄ երկրների տնտեսությունների աճին, թե՛ ինտեգրացիոն գործընթացների ինտենսիվացմանը:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen*» տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 4 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*):
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆԲ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղդասյան

Հանձնված է տպարան 20.02.2018թ.

Թիվ 1 (90), 2018թ.

Տպաքանակը՝ 150:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում